

տպված էր երկրորդ տպագրութեամբ, որոշման-
կան թույլտուութեամբ էջ մի անգամ միայն
Սալլան թե ան է պիտի ուզուի Բայց դրանք
դեռ ընդհանուր սեփականութիւն զառնալու
հրատարակութիւններ չեն և բացի այդ՝ նրանց
պակասում է հոգեւոր բարձրագոյն հաստատու-
թիւնը:

Ուրախալի է, որ նոյն իսկ Եջմիածինը բաւական
թաւանակից է վեր հոգում է եղել Աւետարանի
աշխարհաբար թարգմանութեան մասին: Որքան
մեզ յայտնի է, հանգուցեալ Վեպոյի, Կաթողի-
կոսը յանձնարարել էր մեր յայտնի գրականագէտ-
ներէից մինին թարգմանել Աւետարանը, որի հա-
մար և տուել էր նրան «մագիստրոս» կոչումը:
Բայց ահա մի այլ տեղեկութիւն Աւետարանի
աշխարհաբար թարգմանութեան մասին:

Կրօնական-պաշտօնական «Արարատ» ամսագրի
1879 թ. № 3-ի «Ազգային տեսութիւն» բաժ-
նում կարդում ենք. «Երկու տարի առաջ արդէն
վեհափառ Կաթողիկոսը ցանկանալով սուրբ Ա-
ւետարանը ժողովրդին բոլորովին մատ-
չելի դնելու համար աշխարհաբար լեզուով
հրատարակել, յանձնած է Ս. Աթուիս միաբան-
ներէից մինին ճիշդ և հեշտ հասկանալի լեզուով
թարգմանելու: Առ այժմ ս. Աւետարանի աշխար-
հաբար թարգմանութիւնը վերջացած է. այժմ
ինքն իր պատկառելի հասակի մէջ, չը նայելով
իր բազմադիմի հայրապետական հոգեւորին և ան-
խնայ զբաղմունքին, անձամբ աչքի կանցնէ ա-
մեն մի տողը ամենայն խնամով: Հոգեւոր և
սրտեւաւազ ուրախութեամբ աւետելով
վեհ. Հայրապետի այս բարեբար անօրինու-
թեան մասին, կը ծանուցանենք, որ փոքր ժամա-
նակից յետոյ մամուլի տակ պէտք է մտնէ և
հայկական ժողովուրդը Յիսուսի Աւետարանը
պէտք է ստանայ Արարատեան Մայր Աթոռի
տպարանէն դուրսգլին, միմիայն ծախս եղած
գումով, վաւերական ճանաչված թարգմանու-
թեամբ ժողովրդական աշխարհիկ լեզուով, որ և
մեր մեծագործ Կաթողիկոսի ազգային լուսաւո-
րութեանը նախանձախնայիլ լինելուն փառաւոր
արձաններից մին պէտք է լինի»:

Մենք չենք կասկածում, որ այժման վեհա-
փառ Կաթողիկոսին վիճակված է իրականացնել
ընդհանուր ցանկութիւնը՝ տալով հայ ժողովրդի
ընդհանրութեանը մասնակի, աշխարհաբար լեզուով
թարգմանված Աւետարանը: Յանկալով աջողու-
թիւն այդ հանրօգուտ ձեռնարկութեանը՝ կասենք,
որքան շուտ կատարվի դա՝ այնքան լաւ:

Խ. Մառ.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՈՐԾՈՒԹԱՆ

Շուշի, դեկտեմբերի 28-ին

Յայտնի է, որ բացի որոշ ուղղութիւններ ու-
նեցող լուրջ քաղաքական, իւրաքանչիւր ազգի
մամուլ ունի և իր այնպիսի թերթերը, որոնց սո-
վորական տիպոգրներն են՝ փոքրային, շատա-
թային: Այդ վերջին տեսակի թերթերը գոյու-
թեան կուր օրէնքի համեմատ՝ ընտրել են իրանց
ընդհանրութիւններին և բնագոյումներին համե-

մատ միջնադար. մութ, ստոր կրքեր, նախապա-
շարմունքներ, տգէտ և վատ հոգեւորականների
չափերի պաշտպանութիւն, Արիստոտել արտերի
(մենք էլ ունենք «Մեծպատու Մարտականներ»)՝
ինքնահաւան տղաութեանը և մտաւարութեանը
խնկարկութիւն և այլն: Քրիստոսի ժամանակա-
կից փարիսեցիների և զպիւնների նման, կեղծ աս-
տուածապաշտները, դիմակները երևանբերն այժման
նրանց հակա կան ներկայացուցիչն էր: Եւ ի՞նչ
եթէ ուրիշ փաստ չունեն իրանց անդուրեկան գոր-
ծիչների դէմ՝ սկսում են աղաղակել՝ հայհոյեց Աս-
տուծուն, գիտենալով, որ մոլեռանդ և տգէտ ամ-
բողի համար դա մի գորաւոր խթան է: Թալմու-
դիստներն էլ ունեն յայտնի կրօնական-բարոյա-
կան աշխարհայեցողութիւն, որով համեմատել
կատարեալ է, ինչ որ նրանց չափ ու կշիռն հա-
մեմատ է, հակառակ դէպքում էի խաչ հան...»

Եթէ մէկը հետաքրքրվել է այն սուտ ուղերթով
և զրպարտութիւններով, որ սկսած 1892 թ-ի
օգոստոս ամսից ժամանակ առ ժամանակ արգ-
վում են յիշեալ անանուն թերթում Շուշու
թեմական զարդի մասին և այդ թերթի գեղեցիկ
առաջնորդներին հիւք դառնում, և բացի այդ,
գիտէ թէ ինչ փոփոխութիւններ է կատարվել
այդ զարդի ուսուցչական խմբի մէջ՝ իսկոյն կը
հասկանայ մեր թալմուդականների ցան ու միտ-
քը:

Թէ Ղարաբաղի թեմական զարդի ուսումնա-
կան մասում իմ կատարած փոփոխութիւնները
ինչ սկզբունքների հիման վրա են եղել՝ աւելորդ
է այստեղ կրկնել, քանի որ արդէն «Արարատում»
տպված է 1892—1893 ուսումնական տարվայ
հաշիւ, ուր պարզվում է այդ խել ինչ վերաբե-
րում է պ. Սամուէլ Գիւլղաղեանցի՝ այս ուսում-
նական տարում առանց դասերի մնալուն, դրա
առիթմի կը բերենք նախ յունիս 12-ին կարգա-
ցած մեր հաշիւը հետեւեալ խոսքերով. «Այդ ծեր և
հիւանդ հին գործիչ ուսուցչութիւնը դառնալով
հասակում, իր քաջայլած առողջութեամբ, մի
յանդիմանութիւն է հայ հասարակութեան, որ չէ
մտածում ապահովել իր այն գործիչներին, որոնք
երկտասարը հասակում իրանց ամբողջագէտ նուի-
րել են հասարակական գործունէութեան, իսկ
ծերութեան ժամանակ կարօտ են հանդիստ մի
կտոր հաց վայելելու և մի քանի անկիւն ունենա-
լու, առանց իրանց ոյժից վեր զբաղմունքների:
Մեր առաջարկութիւնը տարվայ սկզբում՝ տալ
նրան կենսաթոշակ և ազատել ուսուցչութիւնից,
չընդունվել հոգաբարձութիւնից, միջոցների աղու-
թեան պատճառով, ուստի և նա կրկին հրաւիր-
վեց ուսուցչութեան, ի վնաս ուսումնարանի ու-
սումնական մասին»:

Եւ արդարեւ, անցեալ ուսումնական տարվայ
մեծ մասը նա հիւանդ էր և ևս սակաված էր ու-
րիշին հրաւիրել ժամանակաւորապէս վարելու
նրա պաշտօնը: Նոյն փորձը կրկնել այս տարի՝
նշանակում էր կենսաթոշակ խնդրին դոնէ ու-
սումնարանի առաջադիւթութիւնը, այնքան թող-
նել, որ աշակերտները ոչինչ չը սովորեն Ֆրան-
սերէնից, գեղագրութիւնից և գծագրութիւնից, ո-
րովհետեւ հոգաբարձութիւնը մի օրոյ քսյլ չէ ա-

նում պ. Գիւլղաղեանի կենսաթոշակի նկատմամբ:
Իմ գրութիւնը այդ առիթով մինչև այժմ էլ մնա-
ցել է անպատասխան, իսկ իմ միջնորդութիւնը,
որ առաջնորդը օժան ժամանակ Եջմիածնում
լինելով՝ հրաւիրէ վեհափառի բարեհաճ ուղարու-
թիւնը այդ ծեր յարգելի գործիչի վրա՝ նոյնպէս
մնաց անհետանք: Թէ որչափ ևս մեղաւոր եմ
այս խնդրում, թող դատէ ընթերցողը:

Ինչ վերաբերում է զարդում տիրող «կրօնա-
բարոյական» ոգուն՝ կարծեմ դրա մասին դատե-
լու համար պէտք է ունենալ աւելի կոմպէտեն-
ցիա, քան ունեն այդ թերթը և նրա «հոգեւոր-
աւոր» թղթակիցները: Մենք կը բաւականանանք
դրանց վերաբերմամբ մէջ բերելով փարիսեցիներ-
ին և զպիւններին ուղղած Քրիստոսի խօսքերը-
«Թող տուք գինս... կոյրք են՝ կուրաց առաջ-
նորդք»:

Տեսուչ Ղարաբաղի թեմական զարդի՝

Լ. Կոն Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս տարվայ առաջին համարը
արդէն սպասված է, այդ պատճառով սրանից
յետոյ մեր լրագրին բաժանարար զրկողները կը
ստանան միմիայն և բոլորովին համարից սկսած:

Բազուի նորընտիր քաղաքապետի պ. Անտօնեան
հրապարակել է իր պաշտօնից. Բազուի դումայի
յունիվարի 8-ի նիստում կարգադրվել է պ. Անտօնեանի
հետեւեալ նամակը, ուղղած դումային: «Օգոստ-
եմ քաղում առիթով, որպէս զի կրկին անգամ
յայտնեմ, որ ես թանգ եմ դեմահատում այն հա-
ւաւոր, որ ցոյց տուց ինձ դուման, դեկտեմբերի
28-ին ինձ Բազուի քաղաքապետի ընտրելով:
Բայց հասուն կիրպով քննելով և ուսումնասիրե-
լով ընթացիկ գործերի բոլոր կողմերը, ես ան-
դաւանալի կերպով վճռեցի հրաժարվել ինձ առա-
ջարկած բարձր պաշտօնից, որի մասին պատիւ
ունեմ յայտնելու ի գիտութիւն դումային»:

Ստացանք ուսն բանաստեղծ Վելիչկով «Второй
сборник стихотворений» անունով գրքիցը, որ
բաղկացած է մօտ 300 երեսից և բովանդակում
է իր մէջ բազմաթիւ ոտանաւորներ և մի պատ-
մական դրամա «Тамара» անունով: Վելիչկով իր
նոտանաւորների ներքի մի նշանաւոր մասը վերց-
նում է արեւելեան կենսաբան և մշակութային նրա
բաւական աջող: Նրա արեւելեան մօտիկները շատ
շուտ դրաւեցին ուսն դրողների ուղարկութիւնը
իրանց վրա, մասամբ այն պատճառով, որ բա-
նաստեղծութեան նախկին թեմաները յաճախ
կրկնվելով մի տեսակ տաղտկութիւն էին առա-
ջացնում ընթերցողի մէջ: Բայց Վելիչկով գիտ-
հասակի է և իր միւս, ոչ արեւելեան կենսաբան
վերցրած, ոտանաւորներով: Նրա երեսակայութիւնը
վրա է, նա արագ է թեթեւ ստեղծում և պատ-
կերներ, որ և հմտութեամբ վերածում է յանգիւրի:
Վելիչկովի գրքը ընթերցողին կընծայի մի քանի
ժամ հաճելի մտաւոր դրամանք, առանց յոգ-
նեցնելու:

Տիկին Մարիամ Գաթիկեան Պապովեան այս օ-
րերս ներկայացրել է երկու հազար բոլորի կով-
կասի հայոց Բարեգործական ընկերութեան խոր-
հրդին, որպէս զի այդ գումարը գործադրվի
Յիսիմաւում հայոց ծխական դպրոց կառուցա-
նելու վրա:

«Արձագանքը» անցեալ համարում հաւատաց-
նում էր, որ ընդունված է ծափահարել միայն
դերասաններին և դերասանուհիներին: Բայց երբ
մենք ցոյց տուցինք, որ ծափահարում են և Գամ-
բետային, և Գլադստօնին, և Վիկտոր Հիւգօյին,
որոնք ոչ դերասաններ են, ոչ դերասանուհիներ,
այլ շատ վեհ և պատկառելի անձինք, Ե-
գիպտոսի այլ և Բրուսայի պատգամաւորը (որ
շատ է սիրում հոգեւորականների փշիւրի տակ
մանել), նեղ ընկած, միամտաբար պատասխանում
է թէ այդ մարդիկ հոգեւորական չեն: Ո՛հ, որպիսի
գիւտ: Ուրեմն խոստովանում էք, որ դրանք ոչ
դերասաններ են և ոչ դերասանուհիներ: Այդ
մէկը կրկնորդ՝ մենք յիշեցինք «Արձագան-
քին», որ վեհափառ Կաթողիկոսին ծափահարում
էին, և այն էլ ինչ կատաղի ծափահարութիւն-
ներ, թիֆլիսում Արդ, հարցնում ենք, ինչու
թիֆլիսում կարելի է ծափահարել, իսկ Եջմիած-
նում ոչ: Ինչ էք միամիտ ձեռնում ի դէպ. իր
ամբիտ, ծիծաղելի պատասխանը պ. Յովհան-
նիսեան սկսում է այս ողբով. «Վերին աս-
տիճանի ծանր է այն հրապարակախօսի դրու-
թիւնը, որ գործում է անկիրթ հասարակութեան
մէջ»: Այո, ցաւակցում ենք ձեզ, վերին աստիճա-
նի ծանր է այն հրապարակախօսի դրութիւնը,
որ ամեն օր թող է փչում, չեղած բաներ հա-
րում, ամեն միջոցների դիմում, որ բաժանորդներ
գանի, թերթը պահպանի, և հետեւ էլ ազգասիրի
անուն ծառանդի, բայց «անկիրթ» հասարակու-
թիւնը ճանաչում է նրա իսկական գոյնն ու նպա-
տակը և երեսը դարձնում: Այո, պ. Յովհաննի-
սեան, վերին աստիճանի ծանր է ձեր դրութիւնը:
Շատ ցաւում ենք:

Թիֆլիսի քաղաքային դումայի՝ դեկտեմբերի
10-ի նիստում, քաղաքային քարտուղար ընտրվեց
պ. Ստեփան Լիսիցեան:

Յունիվարի 11-ին, օպերային խումբը ներկայաց-
րեց Չայկովսկու «Пиковая дама» օպերան: Այս
անգամ էլ օպերան դրաւել էր մեծ բազմութիւն,
մասնաւոր որ մասնակցում էր և օրիորդ Պա-
պայեան: Հիմարիւմ է, Չայկովսկու այս օպերայի
մի քանի տեսարանները տաղտկալի են և ծանր,
բայց երաժշտութեան մէջ այնպիսի հրաշալի
կտորներ կան, և մի քանի տեսարանների երգե-
ցողութիւնը այնքան գրաւիչ է, որ համարձակ
կարելի է ասել, թէ այդ օպերան դեռ կը շարու-
նակի աշխուրդիւն ունենայ ուսնաց բեմերի վրա:

Պետերբուրգի «Новое Время» լրագրի յունիվար-
ի 5-ի համարում տպագրված է մի յոդուած՝
Անդրկովկասի մասին: Սովորելի օրգանին ար-
ժանի այդ յոդուածը մենք թարգմանաբար առաջ
կը բերենք միւս անգամ:

անմիջապէս կը լինի՝ երբ ի նկատի ունենանք,
որ ինտելիգենտ դասակարգին անհամեմատ աւելի
պահանջ ունի և ստանում է գիրք և լրագիր, այն-
պէս որ հասարակ դասակարգի ձեռք բերած և
կարգադրած գրքերի քանակութիւնը շատ աւելի
կը նուազի:

Համեմատելով մեր հրատարակչական գործը
Ռուսաստանի հետ՝ կը տեսնենք, որ Ռուսաստա-
նի հայերս այս կողմից հաւասար աստիճանի վրա
ենք գտնվում ուսնաց հետ, որովհետեւ ուսնաց
մէջ 1892 թ-ին հրատարակված են 7188 կտոր
գիրք, 243/4 միլիօն օրինակներով, որ հաշուելով
Ռուսաստանի 110,628,676 բնակիչների վրա
(Ֆինլանդիայից դուրս)՝ ամեն մի բնակչի գալիս
է 0.16 գիրք, ինչպէս և ուսնացայց մէջ. ուս-
նաց մէջ ամեն մի միլիօն մարդու ընդունվ է 9
լրագիր, ուսնացայց մէջ 10: Բայց որչափ աւելի
վատթար կերպով մեր վիճակը, եթէ համեմատութեան
առեւելու լինենք մեր տաճկահայ եղբայրների հրա-
տարակութիւնների քանակութիւնը, որ, ինչպէս
տեսանք, 2—3 անգամ նուազ է մերից. եթէ ի
նկատ առեւելու լինենք մեր գրագիտութեան սերմ-
նարանների, ծխական ուսումնարանների ողորմելի
թիւն ու վիճակը...

Հրատարակութիւնների բովանդակութեան դա-
րով տեսնում ենք, որ 1892 թ-ին լոյս տեսած

գրքերի մէջ առաջին տեղն են բռնում վիպասա-
նութիւնները (39) ու դասագրքերը (38). յետոյ
գալիս են լրագիրները (24), գիտական (24), բա-
նաստեղծութիւն (13), օրացոյց (13), կրօնական
(11), թատրոնական (10), հին գրականութիւն
(9), ժողովրդական բանաստեղծութիւն և հեքիաթ-
ներ (7), կենսագրութիւն (6), բարոյագիտական
և գրական (11), ալբոմ (6), բառարան (2), ցու-
ցակ, կտակ, հաշիւ (15), միացածը՝ կանոններ,
կրօնական, անկողնային, ճանապարհորդութիւն,
քննադատութիւն:

Բովանդակութեան տեսակէտից նայելով՝ նկա-
տում ենք, որ մեր տաճկահայ եղբայրները գերա-
զանցում են միջանից դասագրքերի վերաբերու-
թեամբ, որից տպել են 30 հատ (մեղանում միայն
8): Լրագիրները ու բանաստեղծութիւնների բա-
ցարձակ թիւն ևս շատ է մերոնցից (15 լրագիր,
8 բանաստեղծութիւն), բայց երբ համեմատու-
թեան առեւելու ժողովրդի թիւն ևս՝ այս մասե-
րում առեւելութիւնը մեր կողմը կը լինի: Տաճ-
կահայոց դասագրքերի շատութիւնը կարող էր
նշան համարվել նրանց դպրոցական առաջադի-
մութեան, որեւմե և գրագիտների թիւի համեմա-
տական առաւելութեան: Բայց դա միայն արտա-
քին, խաբարիկ նշան է. նրանց մէջ, ծրագրի մէջ
մտցրած, պաշտօնագէտ ընդունված դասագր-

քեր չը կան, և ամեն ուսումնարան ազատ է
գործածել այս կամ այն դասագրքը. այս պատ-
ճառով լոյս են տեսնում բազմաթիւ դասագր-
քեր, որոնք սակայն քիչ են տարածվում: Մեր
մէջ ընդհանրապէս ծխական ուսումնարանների
դասագրքերը հոգեւոր իշխանութիւնից ընդուն-
վում և ծրագրի մէջ են մտնում. ուստի մի ան-
գամ ընդունված գիրքը բազմաթիւ օրինակներով
է տպվում և շատ տարածվում: Գրքերի միւս
բոլոր տեսակների մէջ առեւելութիւնը մեր կողմն
է, մասնաւոր դպրի է տարբերութիւնը վիպա-
սանական, գիտական, հին գրականութեան և հե-
քեաթիւնների մէջ, որոնցից արտասահմանում տըպ-
ված է 6+8+2+1=17 գիրք միայն, մինչդեռ
ուսնացայց մի և նոյն հրատարակութիւնների
թիւը հասնում է 33+16+7+6=62 գրքի: Ո՛վ
կարող էր երեւակայել, որ բոլոր արտասահմանի
հայերը, վենետիկի և Վիեննայի հետ միասին,
ապած լինեն մի տարվայ ընթացքում միայն եր-
կու գիրք մեր հին գրականութիւնից, այն ինչ
ուսնացայցս, որոնց մասին ընդհանրացած կար-
ծիք կայ, թէ արտասահմանում ենք մեր հին գրա-
կանութիւնը՝ տպել ենք 7 գիրք:

Նոյն 1892 թ-ականին եւրօպական զանազան
ընդունելով հրատարակված Հայկական մատենա-
գրութիւնը (Armeniaica) հասնում է 62 կտոր գրքի,

Ստ. Մարտիան

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Քիֆիլից, Ներսէս Աթաբեկեանից՝ 20 ռ. (մնացորդ Շուշու հասարակութեան կողմից Արծրունու գագաղի վրա դրած պատկի գումարի), 2) Բաղդուկ, Յովսէփ Խոջայեանից՝ 3 ռ., 3) Ասիաբաղդուկ, Արիստակէս Յակովբեանից՝ 3 ռ. (մնաց բաժ.), 4) Բաղդուկ, Արսէն Տէր Յովհաննիսեանի միջոցով՝ 14 ռ., հանգանակած հետեւեալ անձինքներից, որոնց անունները խնդրում են տրուել. Եղբ. Լ. և Մ. Բաբայեանների՝ 3 ռ., Յարութիւն Պաշալեանի՝ 2 ռ., Եղբ. Տէր-Յովհաննիսեանների՝ 1 ռ. 50 կ., Միքայէլ Ներսիսեան, Ստեփան Սարգսեանեան, Վաղարշակ Ժամակոչեան, Դաւիթ Յարութիւնեան, Անդրէաս Տէր-Յակովբեանց և Մկրտիչ Էջմիածնեան մի-մի ռուբլի: Յարութիւն Պողոսեան, Յարութիւն Բաղդասարեան և Ներսէս Մարկոսեան 50-ական կոպէկ: Ուրեմն նախկին 1616 թուրքի 16 կոպէկի հետ միասին այժմ ունենք 1656 թուրքի 16 կոպէկ:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Նոր տարվայ և Մանգեան տօների առիթով Զգրաւչէնի երկուսու դպրանոցների հոգաբարձութիւնը հաղորտողն բաժանեց չքաւոր աշակերտներին և աշակերտուհիներին, իսկ հոգաբարձութեան անդամ պ. Կ. Հէջումեան իր կողմից քաղցրեղէններ բաժանեց»:

Բազումական տիկին Նիկոլայեթ Սարգսեանը ուղարկել է 10 ռուբլի, թողնելով մեր խմբագրութեան տրամադրութեան: Մենք այս գումարով յատկացնում ենք «Մշակի» մի համար Բաթումի մի խումբ մշակներին:

ԷՋՄԱԾՆԻՑ մեզ գրում են. «Վանքի շահմարանի մէջ ոչ կարգ կայ, ոչ հաշիւ, ոչ կօնորդ: Այժմ մտադրութիւն կայ, վանքի ծախսարարութիւնը յանձնել չորս հոգուց բաղկացած մի խմբի ինչ անձինք կը նշանակվեն այդ խմբի մէջ— ահա միաբանութիւնը դարձնող հարցը, որովհետեւ ծախսարարութեան և շահմարանի գործում պէտք է լինեն անպայման օրինաւոր մարդիկ, ապա թէ ոչ եղածի տանկերով մասը անգամ չի մնայ»:

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ գրում են. «Ամսիս 3-ին, նոր-ընտիր քաղաքագլուխ պ. Անտօնեանի նախագահութեամբ տեղի ունեցած նիստի միջոցին, երկու ձայնաւորները՝ պ. Կ. Իրեցիու և պ. Մ. Ունանեանի մէջ ծագում է անբաւականութիւն, որին և հետեւում է վերաւորանք: Ունեք այդ «անուղիղ» գէպին անհիմն բացատրութիւններ տալով, լուր են տարածում, որ հայ ձայնաւորները իրանց նախագահով համաժող են պ. Ունանեանի հետ»:

ՄՅՈՒԿՈՒՅԻՑ մեզ գրում են. «Անցեալ դեկտեմբերի 31-ին այստեղի դատարանում քննվում էր տեղական գործակալ Խ—եան քահանայի գործը: Հայր գործակալը իր դպիր որդու հետ սարսափելի ծեծել էր եկեղեցու ժամուկին. վերջինս դանդաղ էր ներկայացրել դատարանին: Ահազին, թէ օտար և թէ հայ հասարակութեան առաջ հայր գործակալը որդու հետ միասին դատապարտվեցին երեք օրվայ բանտարկութեան»:

ԷՋՄԱԾՆԻՑ մեզ գրում են. «Նոր տարվայ օրը ճանաչանի աշակերտները իրանց ուսուցիչներով ներկայացան Վ.Ն. Կաթողիկոսին. իր խօսքը ուղղելով ուսանողներին, Վեհափառն ասեց. «Մեր ուսումնարանները վարժապետի կարգում են, դուք պէտք է երթաք վարժապետ ըլլաք. մեր հոգեւորականները ազէտ են, դուք հոգեւորականներ ալ պիտի ըլլաք»: Նոյն օրը վանականները ևս գնացին վեհափառն՝ շնորհաւորութեան: Վեհափառը ամեն մէկին ընծայեց մի—մի Օրացոյց և Հրաւիրակ Աւետանց երկրին»:

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ գրում են. «Երեկ, ամսիս 9-ին, առաջին անգամ այստեղ խաղացին Սուսեղեկեանցի «Ամուսններ» պիեսան. զահլե՛ք կէսից աւելի լի էր, խաղը միջակ էր, տպաւորութիւնը թույլ: Պիեսայի վերաբերութիւնը անորոշ է մնում: Մի կողմից այդ անորոշութիւնը, միւս կողմից խաղացողների մեծ մասի թուլութիւնը, համարեա թէ ոչնչացրին պիեսի տպաւորութիւնը»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Կերակի, ամսիս 2-ին,

Ղուբայի հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Գրիգոր Արծրունու յիշատակին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱԼԻԱՆԻ ՄՈՒՎԱՆ ԳՈՏԱՎԱԾԻՈՂ

Լրագիրներից արդէն յայտնի է, որ Պարիզի երդուեալների դատարանը, չը նայելով անարխիստների սպառնալիքներին, մահվան պատժի դատապարտեց Վալիանին:

Պատգամաւորների ժողովի թէ սոցիալիստ անդամները և թէ ուրիշ կուսակցութիւններին պատկանող պատգամաւորներից շատերը դիմեցին հանրապետութեան նախագահին՝ խնդրելով մեղմացնել մահվան դատաւճիռը: Բայց հանրապետութեան նախագահ Կարնո այս անգամ հարաւոր չը համարեց պատգամաւորներից շատերի խնդրերը կատարել:

Պարիզի մամուլի մեծամասնութիւնը գովում է երդուեալ դատաւորների վճիռը, որոնք Վալիանի յանցանքի մէջ ոչինչ թեկեւացնող հանգամանքներ չը գտան: «Temps» լրագրի կարծիքով Պարիզի երդուեալների դատաւճիռը մեծ նշանակութիւն կունենայ թէ Ֆրանսիայի ներքին դրութեան համար և թէ նրա դէպի օտար պետութիւններն ունեցած յարաբերութիւնները համար: Ի հարկէ, այդ դատաւճիռը արգելք չէ կարող լինել անարխիստական նոր փորձերին, բայց անուամենայնիւ նա մի փոքր կը հանգստացնի երկրը: «Figaro» լրագրը, ընդհակառակը, դատաւճիռը մեղմացնելու կողմն է: Այժմ, ասում է լրագրիւր, երբ դատաւորները իրանց պարտքը կատարեցին և Վալիանը այլ ևս հարաւորութիւն չունի ոչ ոքի վնասել, անհրաժեշտ չէ մահվան պատժի ենթարկել նրան և մի տեսակ հերոս դարձնել նրան: Նա յանցաւոր է և թող յանցաւոր էլ մնայ:

ԱՆՁՆԱՍՊԱՆ ԿԻՆԷ

Նորերա Բաղէշի մէջ քսան տարեկան մի ջահիլ կին անձնապատկութիւն է գործել, որի մասին Կ. Պօլսի լրագիրները հետեւալ դարձնալի մանրամասնութիւններն են հաղորդում:

«Մշոյ Ս. Կարապետի վանքին միաբաններու մէջ փոքրաւորը, Գրիգոր Ապահունի, ժանտախտ կուցեցաւ, ուսուցիչ Բաղէշի աղագլին վարժաւանին, կամուսնանայ առաջին անգամ և կը բնակի իր դղբանչին և աներոյը հետ միասին: Առաջին կէնը կը մնան, և նախկին փոքրաւորը կը վերադառնանայ բաղէշի Գարութիւն Սոցեանի Սոփիկ անուն աղջկան հետ: Սփիկ օր մը հօրը տունը կուգայ և միջոց մը դանդաղ ուր անցնելու ընդ մէջ կը գտնուէր, ընկելով մը կանոն և կուրծքին վրա ձախ կողմէն կը պարպէ: Մայրը լեզապատառ կը հասնի, գործը հարգանքով դատարարին ակնաջը կերթայ, որ անմիջապէս աղէտին վայրը կը հասնի:

«Սեղծ կէնը կը յայտարարէ թէ իր ամուսինը կը սիրէր առջի կնիկանը մայրը, թէ երեք տարի է ի վեր մարտիրոսութիւն մըն էր իր կեանքը, և այս տառապանքը իր ծնողքին յայտնելու համարձակութիւնը չէր ունեցած, թէ վերջին անգամ իր երկը գոգնալին հետ միաբանած գինքը ամբաստանելով թէ 160 զրուշ գողցեր է՝ այս պատրուակով անտեր էին զինքը տնէն ողպէս զի անվրդով զերար սիրեն, թէ ինքն ալ իր տունը վերադառնալու համար չէր անցնելու գաւառացած էր իր գլխուն եկած այս աղետէն: Իր միտնելը ապրելէն աւելի նախընտրելի համարած էր:

«Սփիկ տարձանակի հարուածէն երկու ժամ յետոյ հողին կաւանդէ: Այդ ինքնասպանութիւնն ահազին ցնցում մը պատճառ էր գաւառին մէջ»:

ՍՊԱՆԻՍ

«Բէյաթի» գործակալութեանը Մադրիդից հաղորդում են հետեւեալ դեկտեմբերի 30-ից (11 յունվարի):

«Այսօր հրատարակվեց այստեղ Րիւիդա Զօրի-լայի մանիֆեստը, որով նա ասեւում է, թէ չուսով հանրապետութիւն կը հաստատվի Սպանիայում և խորհուրդ է տալիս իր կուսակիցներին պատրաստ լինել: Հանրապետականների պարագլուխը խոստանում է կարգի բերել Ֆինանսները, ծաղկած դրութեան հասցնել արդիւնաբերութիւնը,

առևտուրը և երկրագործութիւնը, բարեղել բանւոր դատակարգների կեանքի պայմանները, դրբը և նաւատորմը կազմակերպել և հովանաւորել և կեղեցու շահերին: Անարխիստների մասին մանիֆեստի մէջ ասված է թէ. «Մենք անարխիստների դէմ անողորմ պատերազմ կը մղենք: Ներքին հասարակութեան թշնամի են հրատարակում իրանց և այդ պատճառով հասարակութիւնը պէտք է ջնջէ նրանց: Մենք կարող ենք թոյլ տալ, որ քաղաքի ամեն տեսակ ծայրայեղ գաղափար, բայց մենք պէտք է ամենայն ոյժով դէմ լինենք քրէական յանցանքներին»:

ԲԱԳՈՒՅԻՑԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Վանի գաւառային ընդհանուր ժողովը վիճակին առաջնորդ ընտրել է տիւրահաշակ Պողոս եպիսկոպոսը: Մի դադափոր տալու համար թէ Գաւառ. ընդհանուր ժողովին ընտրված, ինչպիսի տարրերէ բաղկացած է արդէն Վանի Ազգ. վարչութիւնը, բաւական է ասել, որ վարչական ժողովների անդամները ընդհանրապէս Պողոս եպիսկոպոսի հին կամ նոր դրբակիցներն են:

Աղագլին կենդրոնական վարչութիւնը ամուսնական դատերին համար 51 յօդուածներէ բաղկացած մի Հշրահանգ դատաւարութեան հրատարակել է, որի համաձայն պէտք է վարուին թէ Կ. Պօլսի և թէ գաւառների դատաստանական խորհուրդները:

Նրուստղէմի Գարութիւն պատրիարքը, որ Կ. Պօլսի կը գտնուի դեռ, սուլթանին ներկայացրել և շնորհակալութիւն յայտնել է նոյն օր իրեն շնորհած Օսմանիէին Ա. կարգի պատուանշանին համար:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Լէյպցիգ, դեկտեմբերի 25-ին
Այն ինչ Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, Եւրոպայի մի քանի տեղերում, և նոյն իսկ Ռուսաստանում կնիքը տղամարդուն հաւասար կրթութիւն և իրաւունքներ տալու հարցը տասնեակ տարիներ ի վեր դրաւեցնում է այդ երկրների որպէս հասարակաց կարծիքը, նոյնպէս և նոյն իսկ կառավարութիւնը, և այդ ասպարէզում կանանց հարցը մասամբ լուծված է և մասամբ էլ վերջնական լուծումը գտնելու ճանապարհի վրա է, ուրիշ կերպարանք է ստացած այդ խնդիրը: Գերմանիայի նման վերին աստիճանի մի կուլտուրական աղբի մէջ: Գերմանացի միջին անգամ ամենակրթված մարդու աչքում կինը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ Hausfrau, տանտիկին, որի գործունէութիւնը պէտք է սահմանափակվի իր տան և ընտանիքի նեղ շրջանում, խոհանոցի վառարանի շուրջը, ճաշի և սուրճի սեղանի շուրջը: Եւ որ ամենապարմանալին է՝ այսպիսի մի նեղ հայեացք կնոջ կուլման և ընդունակութեան մասին գոյութիւն ունի մի երկրում, ուր, որպէս հասարակական, նոյնպէս և քաղաքական գործունէութեան ասպարէզներում մարդ հանդիպում է ամենաքայքայեղ աղտոտմանութեան և առաջադիմական օգուտ ուղղված հնացած պահպանողականութեան և մեռելով, ուժաւորաւ տանադադարութեան դէմ: Իսկ այդ բոլոր ասպարէզներում գործում է միմիայն տղամարդը:

Իսկ կինը, որի աշխատանքը Գերմանիայի նրման մի արդիւնաբերական երկրում, ամենադուրեղ ընդարձակութեան է հասնում, նոյն կինը նրա շահերը ու իրաւունքները ոչ միայն անուշադիր են թողնված տղամարդկանց կողմից, այլ նոյն իսկ հաւանված է նա ամեն տեղ և ամեն դէպքում, երբ նրա շահերը չվրկում են տղամարդի շահերի հետ: «Das Frauenzimmer est eine dume gans» — «Կինը յիմար սագ է», ահա թէ ինչպէս է գնահատում գերմանացի մարդը կնոջ ընդունակութիւնը — ausser der kuche has das Weib nichts zu thun — «տանիցից դուրս նա ուրիշ անելիք չունի, խոհանոց — ահա այն ասպարէզը, որ ցոյց է տալիս կնոջը՝ գերմանացի տղամարդը: Այսպէս են նայում ինչպէս գերմանացի տղամարդկանց գուցէ 90%:

Եւ գերմանացի կինը այսօր շատ լաւ է հասկացել, որ իրան քաղաքացիական իրաւունքներ ձեռք բերելու հարցը յանձնել տղամարդկանց վեհաձայնութեանը և անօրինութեանը՝ կը նշանակի դեռ ևս հարկաւոր տարիներով քնեցնել այդ խնդիրը, ուստի ահա մի քանի տարիներից ի վեր գերմանացի կինը սկսել է ինքն անձամբ իր գործը տեսնել, իր սեփական ոյժերի վրա յենվել: Մի

րոպէ լսենք նոյն իսկ կանանց կողմից՝ թէ ինչպիսի է կայանում նրանց պահանջը:

Մրանից 2 ամիս առաջ Լէյպցիգի նշանաւոր իրաւաւորն պրօֆեսոր Վինտչիգի աղջկը, մի բաղձամարդ ժողովում, հետեւեալ ասեց. «Այն ինչ տաս տարիներից ի վեր ամերիկացի և ռուս կինը իրանց տղամարդկանցից ստացած առանձնահատուկութիւնը՝ քաղաքացիական ասպարէզում ապացուցեցին ողջ աշխարհի առջև, որ կինը ևս մարդուն հաւասար ընդունակութիւններ ունի և այդ ընդունակութիւնները գործածել կարող է ամերիկացի կանանց բարեւութեան համար, մեր տղամարդկանցից շատ և շատ քչերը քաջութիւն ունեցան հաստատել այդ փաստը և յետ վերցնել մեր ստոր ընդունակութիւնների հասցէին ամենայն օր ուղղւած անարդար կարծիքը: Այժմ մեզ համար մի և նոյն է թէ ինչ է կարծում մեր մասին տղամարդը, մենք վճռել ենք մեր ոյժերով ստանալ այն ինչ որ իրաւամբ մեզ պէտք է պատկանէր դեռ ևս շատ և շատ տարիներ առաջ: Ինչ է մեր պահանջը, միջոցներ տալ մեզ հերքելու մեր մասին եղած աննպաստ կարծիքները և պաշտպանել մեր շահերը, որոնք տղամարդկանց կողմից ունաստակ են արվում: Գրանով կինը ոչ քաղաքական յանցաւոր է դառնում և ոչ աւաղակ, այլ մարդկութեան և պետութեան բարօրութեան ամենաարտացառ մի բարեկամ: Այն ինչ տղամարդի առջև բաց են գրտութեան և արուեստների տաճարների դռները, այն ինչ նրանց գործունէութեան համար բաց են բոլոր ասպարէզները, մեր առջև միշտ արդեւոր են դրվում, մեզ յետ են մղում գոյութեան կուլի դաշտից, որով մի և նոյն ժամանակ մեր տղամարդ ասպետները մեզ այդ կուլի անմղ գոհեր են շինում: Միանա՞ք քոյրեր և մայրեր, և միացած, միահամուռ ոյժերով ճանապարհ բացենք կանաքի մէջ մեզ համար, եթէ ոչ մենք պատաքւած, թշուառ գոհեր կը դառնանք»:

Օր. Վինտչիգը չէ առաջինը, որ հրաւիրում է բոլոր գերմանացի կանանցը միութեան. այդ միութիւնը արդէն գոյութիւն ունի տաս տարիներից ի վեր, և իւրաքանչիւր հետեւալ տարի հազարներով աւելանում է ընդհանուր գերմանական կանանց ընկերութեան անդամների թիւը: Ինչպէս յայտնի է, Գերմանիայում գոյութիւն կունեն օրիորդաց գիմնազիաներ, ուրեմն և նոյնպէս իրաւունք չունեն գերմանական համալսարաններ մըտնելու, ինչպէս դա Ամերիկայում և Շվեյցարիայում է: Կանանց բարձրագոյն կրթութիւնը սահմանափակվում է Höhere Mädchenschule և Hôhere Tochter և Burgerschule-ով, որի ծրագիրը համապատասխանում է Ռուսաստանի օրիորդաց գիմնազիաների վեցերորդ դասարանի ծրագրին: Այժմ գերմանացի կինը ձգտում է համալսարաններում ընդունվելու իրաւունքը ձեռք բերելու, և այդ նպատակով նախ սկսել է ձեռնարկել իր սեփական մասնաւոր ոյժերով գիմնազիաներ բանալ:

Կանանց առաջին գիմնազիան հիմնվեց 1893 թ. սեպտեմբեր ամսին Կարլսրուհեում. այս տարի կը բացվի Բերլինում և Լէյպցիգում: Իսկ այդ քաղաքաւոր արժարժեղ համար կանանց ընկերութիւնը ամեն քաղաքներում, ուր իր ճիւղերը ունի, կազմակերպում է կանանց մասնաւոր կուրսեր, ուր դասախօսութիւններ են կարդացվում բարձրագոյն կրթութիւն ստացած կանանց կամ տղամարդկանց կողմից: Այդ դասախօսութիւններին միշտ ներկայ են լինում հարկաւոր կանաք: Այգլիսի կուրսերից մէկն է ահա օր. Վինտչիգի հիմնածը: Գոսախօսներից շատերը Լէյպցիգի համալսարանի պրօֆեսորներն են: Այս ձմեռ կուրսերում կարդացվում էին. 1) ընդհանուր առողջապահութիւն, 2) ֆիլոլոգիա, 3) ընդհանուր գրականութեան պատմութիւն, 4) ընդհանուր պատմութիւն, 5) բնական պատմութիւն, 6) գեղարուեստի պատմութիւն, 7) քաղաքաստիւսութեան պատմութիւն: Կանանց այս ձգտմանը և չարժանի մեծապէս նպաստում են այն օրիորդները և տիկիները, որոնք Շվեյցարիայում արդէն բարձրագոյն կրթութիւն են ստացել: Այդ կանանցից յիշելու արժանի է տիկին Դոկտոր Գոլդշմիտի գործունէութիւնը, որը ահա 12 տարուց ի վեր ամենամեծ եռանդով կրած է այդ գործին և այժմ նախագահ է կանանց ընկերութեան: Այս ընկերութեանը մեծապէս օգնում է ընդհանուր գերմանական վարժուհիների ընկերութիւնը, որը այժմ 5600 անգամ ունի: Այս ընկերութեան նըպատակն է պաշտպանել ուսուցչուհու մասաւոր դարգացման և նիւթական ասպանովութեան գործը

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Կիրակի, յունվարի 16-ին, լինելու է

ՅՕԳՈՒՑ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Գ Ի Ե Ս

ՇԲԵՂ ԿՕՏԻԼԻՈՆՈՎ

Մուտքի գինն է 2 ր. 10 կ. Սկիզբը ժամի 9-ին:

Տոմարները կարելի է վաղորդք ստանալ Ընկերության գրասենյակում: Բարձրագույն փողոց, տուն Գեղեվանովի, № 4:

Պարոնները պետք է լինեն ֆրակով, իսկ տիկիները համար պարահանդեսի ըզգեստը պարտաւորեցուցիչ է:

1—3

Եջմիածնից վերադարձած լինելով Թիֆլիս, պարոնը եմ համարում յայտնել ինձ հետ գրադրութիւն ունենալ ցանկացողներին, որ իմ հասցէն հետեւեալն է.
ՏԻՖԼԻՍԻ, ՎՕԶԱԼԵ, ԿԱՐԱ-ՄՍՐԱ.
(№ 25) 3—4

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1894 ГОДЪ

НА ГРУЗИНСКУЮ ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„ИВЕРІЯ“

Подписная цѣна газеты съ доставкой и пересылкой:

На 12 мѣсяцевъ	10 р. — к.	На 6 мѣсяцевъ	6 р. — к.
11	9 > 50 >	5	5 > 25 >
10	8 > 75 >	4	4 > 75 >
9	8 > — >	3	3 > 50 >
8	7 > 25 >	2	2 > 75 >
7	6 > 50 >	1	1 > 50 >

За границу на годъ 17 руб., на полгода—9 руб. 50 коп.

За перемѣну адресовъ уплачивается: иногороднаго на иногородный—40 коп., городского на иногородный—1 руб. Подписка принимается не иначе, какъ съ перваго числа каждаго мѣсяца. Подписка и объявленія принимаются въ Тифлисъ, въ помѣщеніи редакціи, Николаевская, 21.

Иногородные обращаются съ требованіями: Тифлисъ. Въ редакцію газеты «Иверія» 3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սօրթախայա փողոց, սեփական տանը № 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԳՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.

Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

(№ 145)

114—150

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՆՈՐ ԲԱՅՎԱԾ ԴԵՂԱՏԱՆ ՊԱՀԵՍԻՍ ՎԵՐԵ
Սեփական ընդունում եմ պատուէրներ ԴԵՂԱՏԻ և ԿՈՍՏԵՆԿԱՆԵՐԻ: Դեղագործներին և բժիշկներին զիջում:Դիմել ԶՐԻՎԱՆԻ, новый аптекарский магазинъ Александра Никитича Акопянца. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅԱԿՈՎԵԱՆՑ
№ 15 (Ե.) 6—10

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նազորնայա փողոց, № 9)

Ցանկացողը, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն զիմեղ կուրսերի հիմնողին, Ս. Մանուկեանին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովրանով-ների բանկային գրասենյակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք զիմեղ են: Թիֆլիս, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэляну.

№ 88

3—20

Մամուլի տակից լոյս տեսաւ. «Արօր» պատկերազարդ

ՕՐԱՅՈՅՑ 1894 Թ.

Մեծ դիւրով, գեղեցիկ թղթի վրա, մաքուր տպագրութիւն: Սկզբում գեղեզւած է վեհափառ Վաթիկոսի պատկերը (վերջին լուսանկարից հանած):

Հրատարակութիւն «Արօր» տպարանի, Բաղուսի:

Բովանդակութիւն. I. Օրացոյց: II. Եկեղեցական և Վաթիկոսի տօների ցուցակը: III. Ճամանակագրութիւն. 1) ընդհանուր պատմութիւնից, 2) հայոց պատմութիւնից: IV. Վերականգնութիւն. 1) ընդհանուր վիճակագրութիւն, 2) Ռուսաստան, 3) Անգլիոյ թագուհի Եղիզիմի շահանգ, Երեւանի շահանգ, Գանձակի շահանգ, Բուխարայի շահանգ, Կադստանի շահանգ, Գարսի շահանգ, Բաղու. քաղաք (մանրամասն տեղեկութիւններ իւրաքանչիւր տեղի բնակչութեան, գրէ-խաւոր քաղաքների, արդիւնաբերութեան մասին): V. Այլ և այլ տեղեկութիւններ. 1) պօստային կանոններ, 2) հեռագրական կանոններ, 3) խնայողական գանձարաններ, 4) դրուագրութիւն: VI. Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոս (կենսագրութիւն): VII. Մեր երկրի հնութիւններից. 1) Տաթև (2 պատկերով), 2) Անի (4 պատկ.): VIII. Մեր տօնացոյցից մի շարք անուններ (պատմական տեսութիւն): IX. Մահացուցակ. 1) Ռաֆայէլ Պատկանեան (պատկ.), 2) Գրիգոր Արծրունի (պատկ.) 3) Գարեգին եպ. Սրուանդատեան (պատկ.), 4) Խորեն արքեպիսկոպ. Նաբրէյ, 5) Ստեփան եպիս. Մելիթարեան (պատկ.): X. Բժշկական խրատներ. XI. Տնային տնտեսութիւն. XII. Այլ և այլը. XIII. «Արօր» օրացոյցը: XIV. Ցաւեւրութիւն. վեհափառ Վաթիկոսի ուղեւորութիւնը և օժուրը (4 պատկերով): XV. Ցայտարարութիւններ: Գինն է 1 ռուբլի:

Ծախվում է Բաղու, «Արօր» տպարանում: Հասցէ՝ Բաքու, Типография «Арор».

(№ 23)

3—3

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոմերներ որոնց սարք ու կարգը ամենալավ արտասահմանեան հիւրանոցների սենյակներին է նման: Նոմերների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ընտանոցան, տեղեֆոն, քաղցրեղենների խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 60—130 (2.)

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1894 ГОДЪ

(одинадцатый годъ изданія)

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

Въ 1894 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисъ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются: Въ Тифлисъ: въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12; въ Баку, у К. И. Ярченко, Балаханская ул., д. № 19, рядъ съ ремес. училищ.; въ Батумѣ, у М. И. Николадзе, въ газетномъ агентствѣ; въ Кутаисѣ, у бр. Чиладзе; въ Елисаветполѣ, въ аптекарскомъ складѣ Альтгаузена.

Лица, подписавшіеся (безъ разсрочки) на годовое изданіе «Новаго Обозрѣнія» 1894 г. въ текущемъ году, будутъ безплатно получать газету въ этомъ году со дня подписки.

3—3

Նշելով, որ 1-ից կը ստացվի ՊԱՏԵՐՈՐ ՄԻՍԵՐՈՎ, ՊԱՏՐԱՍԱՆ ԲՐՈՒՍՍԱՅԻ ԲՈՂՈՒՄ ՍՊԵՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԵ, որ արդէն յայտնի է ամբողջ կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով: Մերմէ կը ստացվի ուղղակի յայտնի «Երեւոմիտեան» ֆիրմայից: Գնել ցանկացողները կարող են զիմեղ եղբ. ՄԱՅԱՆՍԿԱՆԻՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բաղուսում: Նույնպէս Աղա-Մուսա Մահմադովին. Այս հասցէով. Բր. Մնազանյան, Թիֆլիս, կամ Բաքու, կամ Բատում:

(Ե. 2.)

14—32

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍ ԵՒ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ զեղերի, մորթիի զեղեցկացնող և հոտաւա, նոյնպէս և աւող-ջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է կովկասում, վարձույթի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի սակ:

(№ 67)

55—100 (Ե. 2.)

Открыта подписка на 1894 годъ (сорокъ девятый годъ изданія)

„КАВКАЗЪ.“

Редакторъ-издатель Ю. Н. МИЛЮТИНЪ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:					
Городская.	Иногородная.	Зарубежная.	Городская.	Иногородная.	Зарубежная.
На 12 мѣсяцевъ 11 р. 50 к.	13 руб.	18 р. 40 к.	На 12 мѣсяцевъ 11 р. 50 к.	13 руб.	18 р. 40 к.
11	12	17	11	12	17
10	11	16	10	11	16
9	10	15	9	10	15
8	9	14	8	9	14
7	8	13	7	8	13
6	7	12	6	7	12
5	6	11	5	6	11
4	5	10	4	5	10
3	4	9	3	4	9
2	3	8	2	3	8
1	2	7	1	2	7

Подписка принимается съ перваго числа каждаго мѣсяца на всѣ сроки отъ одного до двѣнадцати мѣсяцевъ. Желающіе подписаться съ разсрочкою вносятъ 2 р. при подпискѣ и по 1 р. къ первому числу каждаго послѣдующаго мѣсяца до погашенія всего причитающагося платежа.

Плата за объявленія (со строки петиціи или занимаемого ею мѣста): На послѣднихъ страницахъ: съ мѣстныхъ объявленій (кавказскихъ)—6 коп., съ прочихъ—10 коп., за каждый разъ. На первыхъ страницахъ вдвое. За большія или многоразныя объявленія по соглашенію.

Подписка и объявленія принимаются въ конторѣ «КАВКАЗА»: Тифлисъ, Дворцовая улица, домъ Тифл. Двор. Зем. Банка.

3—3



ՄԻՋՈՑ ԽՆԴՐՈՒՄԻ ԴԵՍ

„Ольфакторіумъ Нудиливъ“
М. І. ЖИРМУНСКАГО.

բժշկական դեղատարածանից թղա-տրված

ՕԼԶԱԿՏՐՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Կեղադր ծական Ապրանքների վաճառման կովկասեան Ընկերութեան մեջ Թիֆլէ:

տուժ:

№ 128 (91 Թ.)

12—40

Լոյս տեսաւ.

ՄՈՂԱՍԵ ՌՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նոր թարգմանութիւն Մ. ԷՄԻՆԻ
(Ծանօթութիւններով և յաւելումներով):

Գինն է 2 ր. Ծանապարհածախսով 2 ր. 25 կ.

Պէտք է զիմեղ այս հասցէով, Москва, Правленіе Лазаревскаго института
կամ Тифлисъ, Центральный Книжный Магазинъ.

(Ե.) (№ 3)

10—10